

Առաջները օդապարիկով շատ վը-
տանգներ կըլլային . մէյմը որ գուն-
տը շատ բարձրացած ատենը այնչափ
կըձկտէր որ կըձաթէր , և բոլորը մէ-
կէն վար կիյնար . մէջի մարդն ալ
կամ կըմեռնէր կամ սաստիկ կըլլա-
սուէր . ուստի ասոր ճարը գտան որ
գունտը խիստ շատ պէտք չէ լեցը-
նել , որպէս զի բարձրացած ատենը
մէջի կազը լայննալու բաւական միջոց
ունենայ , ու գունտը չձաթեցընէ :
Երկրորդ՝ ասանկ դիպուած ալ ըլլայ
նէ , որպէս զի մէջինը գահավէժ չիյ-
նայ , կողովին վրայ հաստատուած է
մեծ հովանոց՝ մը , որ գունտը վեր
ելլելու ատեն գոց կըկենայ , ու վար
իջնալու ատեն ինքիրմէ կըբացուի
կըտարածուի , և օդին արգելք ընե-
լովը ծանր շարժմամբ վար կիջնայ ,
ու հանդարտ գետնի վրայ կընստի :
Երիկայ հասարակ հովանոցէն անով
կըտարբերի որ մէջտեղէն մեծկակ
ծակ ունի , որ վար իջնալու ատեն օ-
դին բոլորովին դէմ դնելով՝ ասդին
անդին չնետուիր , և օդը ծակին մէջէն
դէպ'ի վեր վազելով գունտը շիտակ
կիջնայ :

(Օդապարիկը թեթե ըլլալուն՝ հո-
վի դէմ կառավարելը դժուար է , և
քիչ մը հովն ալ բաւական է զինքը
առնելու տանելու : Ենոր համար ին-
չուան հիմա շատ փորձեր ըրին օդա-
պարիկին ղեկ՝ շինելու , որ չէ թէ
միայն հանդարտ ատեն ուզած տե-
ղերնին տանին , հապա հովին դէմ
ալ երթան . թէպէտ և ինչուան հիմա
ամէն փորձ անօգուտ եղաւ , բայց
շատ վարպետ մարդիկ դեռ ետեւէ են
առաջ տանելու և ամէն դժուարու-
թեանց յաղթելու :

1 Ըմբիկէ , սոմելու :
2 Տի-մէն :

ԲԱՍԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սալամանդր :

ԱԱԼԱՄԱՆԴՐ ըսուած հոչակաւոր
կենդանին գորտի տեսակ մըն է : Ե-
սոր վրայ հին ատենը կարծիք մը կար
թէ կրակի մէջ ողջ կըմնայ ու չայրիր' :
Երիստոտելի ատենէն 'ի վեր շա-
տը կըսէին թէ դժոխքին կրակէ գե-
տերուն մէջ լեցուն է աս կենդանին .
Պլինիոս ալ անէծք կուտայ ասոր
որ կորսուի ծնջուի աշխարհէս , որով
հետեւ բոյսերը իրեն թոյնովս կապա-
կանէ կըսէ : Բայց շատ փորձերով
ստուգուած է աս կարծիքներուն սը-
տութիւնը : Պրակի մէջ իրաւ է որ
քիչ մը ատեն կըդիմանայ . վասն զի
մէկ յատկութիւն մը ունի որ ատեն
ատեն կայչուն հիւթ մը գուրս կու-
տայ . որով պատի կրակ մը կրնայ մա-
րիլ , կամ ինքը ան հիւթին ուժովը
կրնայ կրակին մէջէն անշնաս դուրս
ելլել : Խակ թոյն ամենեին չունի , և
բուսոց ու կենդանեաց վնաս մը ը-
ներ . ընդհակառակն՝ բնութեամբ
տկար , ապուշ , վախկոտ կենդանի
մըն է , ու կերենայ թէ խուլու ան-
ձայն ալ է : Վալուածքը դանդաղ է ,
ու միշտ շիտակ դէպ'ի առջև կեր-
թայ՝ առանց մէկդին կամ մէկալդին
ծուելու :

Աալամանդրի տեսակներէն ոմանք
ջրի մէջ կըբնակին , ոմանք ցամաքը .
բայց ամէնքն ալ կըսիրեն թաց տե-
ղուանք բնակիլ ու ատեն ատեն ա-
րեւուն մէջ կենալ : Չմեռը գետնի
տակ կամ տղմի մէջ կըպահութիւն .
ամառը 12 կամ 15 օրը մէյմը մոր-
թերնին կըփոխեն : Երենց կերակու-
րը որդ , ձձի և ուրիշ մանր կենդա-
նիներ են : Աովորաբար լճերու մէջ
կըգտնուին . երբեմն ալ առուակնե-
րու , աղբիւրներու ու ջրհորներու

1 Տաճկերէն ու մէնուէր կըսուի . իսկ պարսկի բա-
ռովնան աւելի լու կամ աւելին , իբր թէ կրակի
դիմացող :



Առաջնորդ :

մէջ : Կըլլայ որ գիշերով ալ դուրս
կելլեն իրենց բնակարանէն , մանա-
ւանդ անձրեստ օրեր , կամտեղերնին
փոխելու համար , կամթէ կերակուր
փնտուելու համար . բայց քիչ կըհե-
ռանան իրենց բոյնէն :

Իս կենդանւոյն մասնաւոր յատ-
կութիւնն է որ եթէ թաթը կտրես
ու ետքը զինքը ջրի մէջ դնես , ութը
օրէն կըտեսնես որ թաթը ամբողջա-
ցեր է . քանի մը օրէն ետքն աւելի
կըձեւորուի , ու մէկ ամսուան մէջ
ան նոր բուսած թաթը մէկախերէն
ամենեին տարբերութիւնը չունենար:

Որոշ չգիտցուիր թէ սալամանդրը
որչափ կարի . բայց հաւանական է
որ շատ տարի կըդիմանայ հասարակ
գորտերուն պէս , ու խիստ գժուա-
րութեամբ կըմեռնի : Ոուր դանա-

կով մը թէ որ գլխուն սկաւառակը
Ճեղքես՝ ըղեղը հանես , ու զինքը նո-
րէն ջուրը ձգես , գեռ երկար ատեն
կըպտըտի , կուտէ , ու ամէն տեսակ
կենսական գործողութիւնները կընէ :
Բայց թէ որ քացախի մէջ կամ գի-
նիի ոգիքի մէջ թաթիւնս , կամ սաս-
տիկ աղոտես , մէկէն կըմեռնի :

Եւրոպայի սալամանդրներուն վը-
րայի գոյնը թուխ է , փորերնին գե-
ղեցիկ կարմիր , և իրենց բոլոր մար-
մայն վրայ մանր մանր կլոր ու սե բը-
ծեր ունին : Եւրուին կոնակը հաւու
կատարքի՝ պէս բան մը կըլլայ միայն
գարնան ատենը , որ գլխէն ինչուան
պոչին ծայրը կըհասնի :